ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ------- 2023 թվականի №---Ա

«ՅՈՒՔՈՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԱՐՔԻ ԿՆՔՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ՅՈՒՔՈՄ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2023 թվականի հուլիսի 17-ի №748 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) է ներկայացրել Ընկերության նկատմամբ հսկողության փոխանցումը համաձայնեցնելու հայտ (այսուհետ՝ Հայտ), որի համաձայն՝ «Այյու Թելեքոմյունիքեյթիդ Լիմիթեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող Ընկերության 29.093068%, Գուրգեն Գագիկի Խաչատրյանին պատկանող Ընկերության 11.908948%, Արտյոմ Գագիկի Խաչատրյանին պատկանող Ընկերության 11.908948%, Արամ Սուրենի Խաչատրյանին պատկանող Ընկերության 24.342602% բաժնետոմսերը գրավադրելու են «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության օգտին,

բ) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնո-լոգիական արդյունաբերության նախարարությանն (այսուհետ՝ Նախարարություն) ուղղված Հանձնաժողովի 2023 թվականի հուլիսի 20-ի №ԳԲ/34.2-Մ2-8/2486-2023 գրությանն ի պատասխան՝ Նախարարությունը 2023 թվականի օգոստոսի 21-ի №01/11.1/8107-2023 գրությամբ հայտնել է, որ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության հետ քննարկման արդյունքներից ելնելով առարկում է Հայտով նախատեսված գործարքի կայացմանը,

գ) Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործարքի համաձայնեցումը կարող է մերժվել, եթե համաձայնություն ստանալու համար ներկայացված փաստաթղթերը և (կամ)

տեղեկատվությունը չեն համապատասխանում Հանձնաժողովի սահմանած կարգի պահանջներին, ինչպես նաև իրավասու մարմնի գնահատմամբ վնասում է կամ կարող է վնասել ազգային անվտանգությունը կամ պետական շահերը, իսկ մրցութային դիմումների կամ աճուրդի միջոցով տրամադրված լիցենզիայի կամ թույլտվության առկայության դեպքում, երբ չի հիմնավորվում անհրաժեշտ փորձի առկայությունը,

դ) Հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 9-ի №56-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը գործարքի կնքմանը համաձայնություն տալը մերժում է, եթե այն իրավասու մարմնի գնահատմամբ վնասում է կամ կարող է վնասել ազգային անվտանգությանը կամ պետական շահերին,

ե) Հայտի ուսումնասիրության գործընթացի շրջանակում փաստվել է, որ առկա են Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի և Կարգի 19-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գործարքի կնքմանը համաձայնության տրամադրման մերժման հիմքերը, մասնավորապես, գործարքին ազգային անվտանգությանը կամ պետական շահերին վնասելու տեսանկյունից գնահատող իրավասու մարմնի կողմից տրվել է բացասական դիրքորոշում՝ Հայտի առնչությամբ Նախարարությունը, որպես իրավասու մարմին, առարկել է գործարքի կնքմանը, և

հիմք ընդունելով Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Կարգի 19-րդ կետի 2-րդ ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Մերժել Հայտով նախատեսված՝ Ընկերության նկատմամբ հսկողության փոխանցման գործարքի կնքմանը համաձայնության տրամադրումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- ---------- 2023թ.